ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Թիվ ՎԻՎ/153/2019

ՈՐՈՇՈՒՄ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **24 հունիսի 2019թ.**

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը, հետևյալ կազմով՝ Ա. Խուդավերդյան, Ա. Սարգսյան, Լ. Պետրոսյան, Է. Շաթիրյան (այսուհետ՝ Հանձնաժողով), նախագահությամբ՝ Ա. Սարգսյանի, քարտուղարությամբ՝ Է. Շաթիրյանի,

2019 թվականի հունիսի 24-ին, քննելով ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի հերթապահ խմբի պատասխանատու հերթապահ Կարեն Նվերի Կամավոսյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով (հայտարարատու պաշտոնատար անձի կողմից «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված հայտարարագիրը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելը) նախատեսված առերևույթ վարչական իրավախախտում կատարելու հատկանիշներով հարուցված գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1. Հանձնաժողովը, իրականացնելով ««Հանրային ծառայության մասին» ՀՀ ՀՕ-172-Ն 26.05.2011 օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 43-րդ և 43.1-ին հոդվածներով իրեն վերապահված գործառույթները, էլեկտրոնային հայտարարագրերի ռեեստրի տվյալների ուսումնասիրության արդյունքներով պարզել է, որ Կարեն Նվերի Կամավոսյանի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց 2018թ. տարեկան հայտարարագիրը (այսուհետ նաև՝ Հայտարարագիր) հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չէ:

2. Կարեն Նվերի Կամավոսյանը պարտավոր էր պաշտոնավարման ընթացքում տարեկան Հայտարարագիրը (2018թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ի դրությամբ) Հանձնաժողով ներկայացնել մինչև 2019թ. մայիսի 31-ը:

3. Վերոնշյալի առնչությամբ 2019 թվականի հունիսի 12-ին կազմվել է թիվ Հ/153/2019 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

4. Հանձնաժողովի 12.06.2019 թվականի թիվ ՎԻՎ/153/2019 որոշմամբ հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/153/2019 գործի վարույթը և նշանակվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

5. Կարեն Նվերի Կամավոսյանը պատշաճ տեղեկացված լինելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն տեղի և ժամանակի վերաբերյալ, չի ներկայացել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը:

II. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

5. Հանձնաժողովը, ուսումնասիրելով և վերլուծելով թիվ ՎԻՎ/153/2019 գործում առկա նյութերը, կատարելով գործի հանգամանքների քննություն, հաստատված է համարում, որ Կարեն Նվերի Կամավոսյանը «Հանրային ծառայության մասին» ՀՀ 23.03.2018թ. ՀՕ-206-Ն օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողով չի ներկայացրել գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց 2018թ. տարեկան հայտարարագիրը:

III. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը

6. Կարեն Նվերի Կամավոսյանն Օրենքի 32-րդ հոդվածի ուժով հանդիսանում է գ**ույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց մասին հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:**

7. «Հանրային ծառայության մասին» ՀՀ 23.03.2018թ. ՀՕ-206-Ն օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայտարարատու պաշտոնատար անձինք և նրանց ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք 2018 թվականի տարեկան հայտարարագիրը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով են ներկայացնում մինչև 2019 թվականի **մայիսի 31-ը**:

8. Օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի կողմից հայտարարագրերը Օրենքով սահմանված ժամկետների պահպանմամբ Հանձնաժողով չներկայացնելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

9. Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներից է հայտարարատու պաշտոնատար անձի կողմից Օրենքով նախատեսված հայտարարագրերը Հանձնաժողով օրենքով սահմանված ժամկետներում չներկայացվելու դեպքում օրենսդրությամբ սահմանված կարգով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելը և վարչական տույժեր նշանակելը:

10. Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի կողմից Օրենքով նախատեսված հայտարարագիրը Հանձնաժողով Օրենքով սահմանված ժամկետներում չներկայացնելը առաջացնում է նախազգուշացում:

11. Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, 25-րդ հոդվածով, 37-րդ հոդվածի 7-րդ մասով, 169.28-րդ հոդվածի 1-ին մասով, 244.17-րդ հոդվածով՝

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը որոշեց.

1. Կարեն Նվերի Կամավոսյանի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց 2018թ. տարեկան հայտարարագիրը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չներկայացնելու համար Կարեն Նվերի Կամավոսյանի նկատմամբ կիրառել «նախազգուշացում» վարչական տույժը:

2.Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 40-րդ հոդվածին համապատասխան՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որի չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

3. Կարեն Նվերի Կամավոսյանին տեղեկացնել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ վերոնշյալ վարչական տույժի կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում, հայտարարագիրը չներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Նվերի Կամավոսյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

Հանձնաժողովի անդամներ՝ **Ա. Խուդավերդյան**

Է. Շաթիրյան

Լ. Պետրոսյան

Ա. Սարգսյան